# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/34 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ | «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» 3-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՄԵԴԱԼ Համապատասխան տուփով: Տեխնիկական բնութագիր՝ տես կից ֆայլը Մինչև մատակարարումը 1 հատ նմուշ ներկայացնել պատվիրատուին՝ համաձայնեցման: 1. «Անբասիր ծառայության համար» 3-րդ աստիճանի մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև, որը պաստառապատված է 24 մմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լայնություն ունեցող նկարին համապատասխան գույներ ունեցող ժապավենով: Կախիչի վերին մասի երկարության կենտրոնից մինչև ներքին գագաթը 50 մմ է: Կախիչը հակառակ երեսում ունի ասեղային ամրակ՝ պարգևատրվածի հագուստին ամրացնելու համար: Սկավառակը ոսկեգույն է, պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից և ունի 32 մմ տրամագիծ, հաստությունը 2.5 մմ է, որի սահմանային շեղումը կարող է լինել մինչև 5%: Սկավառակի դիմերեսի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության խորհրդանիշը: Խորհրդանիշի ստորին մասում սկավառակի կորին զուգահեռ տառերով գրված են «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» գրվածքները: Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության խորհրդանիշը վերին մասում եզերված է աստիճանաձև նախշերով և կարմիր արծինով պատված կոր եզրագծով: Մեդալի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | դարձերեսի կենտրոնում գրված է «10 ՏԱՐԻ»: Մեդալը դարձերեսի կողմից ունի համապատասխան շրջանակ՝ հերթական համարը դրվագելու համար: Մեդալի միանմանությունն ապահովելու համար այն պատրաստված է հատուկ տեխնոլոգիայով և դրոշմման ճանապարհով: Մեդալի տուփ /մեծ/: (160x110x35)մմ ձևաչափի, ստվարաթղթից, կապույտ գույնի բումվինիլից պատված, եզրերին ոսկեգույն նախշերով, ներսում վերևի հատվածը սպիտակ մետաքսապատ, ներքևի մասում՝ կապույտ թավշապատ մահուդից: Մեդալների և շքանշանների համար նախատեսված է հատուկ ամրակներ: ՀՀ ՊՊԾ տարբերանշանով: Նմուշը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2024/34 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |